

ԼՂՀ-ում ՏԱՐԱԾՎԱԾ ԿՐԾՈՂՆԵՐԻ (RODENIA)

ԿԵՆՍԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Տ. Հայրապետյան

Կենսաբանության ամբիոն

Արցախյան պաշարի տնրիաֆաունայում կենդանիների տնսակային բազմազանությամբ կրծողները գրավում են առաջին տեղը: Սակայն, որքան էլ անհավանական թվա, ունենալով տնսակային մեծ բազմազանություն և լայն տարածվածություն վերջիններս համարվում են կաթնասունների դասի առավել թույլ ուսումնասիրված կարգերից մեկը, մասնավորապես՝ Արցախում:

Տարբեր կարգաբանությամբ կրծողների կարգը ընդգրկում է 30-40 ընտանիք, որոնք իրենց ընդթին բաժանվում են 3-5 ենթակարգերի (2,3), մինչդեռ ԼՂՀ կենդանական աշխարհում առ այսօր հայտնաբերված է ընդամենը ութ ընտանիք՝ 30-33 տնսակներով (1), ինչը, ամենայն հավանականությամբ, վերջնական տվյալներ չեն:

Կրծողներն ունեն էկոլոգիական բարձր ձկնոտություն, որը նպաստում է ամենաբազմազան լանդշաֆտա-կլիմայական գոտիներում նրանց բնակմանը: Կրծողների որոշ մորֆո-ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկություններ թույլ են տալիս նրանց համարմանաբար հեշտ հարմարվել միջավայրի անբարենպաստ պայմաններին, խուսափել վերջինիս կործանիչ ներգործությունից և արագ վերականգնել իրենց գլխաքանակը, որը հատուկ է կաթնասունների դասի այլ կարգերին:

Արցախի ֆաունայում տարածված որոշ կրծողներ տարվա մեջ տալիս են 6 սերունդ, յուրաքանչյուրում՝ 8-9 ձագ, որոնք սնոհաստուն են դառնում 3 ամսականում: Դա պայմանավորված է բնակլիմայական պայմանների առանձնահատկություններով:

Այսօր Արցախում նկատվում է կրծողների գերած, որոնք բավականին վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մեր դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում կրծողների առավել գերած է նկատվել Հաղորդի և Մարտունու հարթավայրային գոտիներում, ինչը բացատրվում է հատկապես այս գոտում հացահատիկի արտադրության հիմնական իրականացմամբ, որը մկնամսման կրծողների համար ենթադրում է առատ կերի բազայի առաջացում:

Այսպիսով՝ Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղին պատկանող «Թափա» կոչվող տարածքում, (ավելի քան 10 հա) ավել է, 10 հատվածում յուրաքանչյուր 100 քառ-ի վրա կատարել ենք մկների գործող բների հաշվում և պարզել՝ առաջին հատվածում եղել է 1300, 2-րդում՝ 1290, 3-րդում՝ 1010, 4-րդում՝ 1200, 5-րդում՝ 1150, 6-րդում՝ 1110, 7-րդում՝ 800, 8-րդում՝ 1250, 9-րդում՝ 950, 10-րդում՝ 1310:

Ընդ որում 1 հա-ում այն հասնում է շուրջ 11370 անցքի: Նույն շրջանի «Մուղանյու» կոչվող տարածքի 10 հատվածում կատարված հաշվումների արդյունքում մեկ հա-ի հաշվով կազմել է 11780, Հաղորդի շրջանի «Թողարան» կոչվող տարածքում մեկ հա-ի հաշվով 12340, «Ղաշքեստանում»՝ 12010 մկնամսման կրծողների գործող անցքեր: Այս տվյալները խոսում են նշված տարածքներում կրծողների պոպուլյացիաների գերածի մասին: Նմանատիպ նրկայթներ եղել են 2000, 2002, 2004 թվականներին:

Կրծողների ինտենսիվ զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով՝ կենսաժին և ոչ կենսաժին: Նրանց զարգացումը ընթանում է ոչ միայն կերային հնարավորությունների պարզ ընդլայնման արդյունքում, այլ տնսակի և միջավայրի միջև նոր հարաբերությունների ծագումով: Այդ հարաբերությունները ստեղծվում են կոպտորակյան լանդշաֆտների պարզ համակենցություններում և համարյա միշտ ընթանում է տնսակի կենսակերպի և կենսացենոզի մյուս անդամների միջև կապի այս կամ այն փոփոխությամբ:

Այսօր այդ փոփոխություններն առավել վառ են արտահայտված ագրոհա-մակենցություններում, ինչի հիմնական պատճառներից մեկը կոպտորակյան լանդշաֆտների ագրոտիլնիկական միջոցառումների որևէ օղակի բացակայությունն է: Միաժամանակ անհրաժեշտ է նշել կենսացենոզներում սննդային շղթաների փոխհարաբերությունների մասին, նշված տարածքներում խիստ կրճատվել են աղվեսների, կզաքիսների, գիշարող թռչունների (կարսիի, ցին, սև ցին, լորաճուռակ, տափաստանային ճուռակ, տափաստանային արծիվ, գերնգամաարծիվ և այլն) քանակը:

Այս և մի շարք այլ կենդանատնսակների թվաքանակի կրճատումը ևս պայմանավորված է մարդու անմիջական ու անհաշվենկատ միջամտությամբ: Սակայն, կաթնասունների

գիշատիչների կարգի մի շարք ներկայացուցիչներ համարվում են կրծողների դեմ կենսաբանական պայքարի հիմնական միջոց և բնության սահմանարներ:

Նշվածի իմաստը այն չէ, որ կրծողները որպես գյուղատնտեսության վնասատուներ դատապարտված են ոչնչացման, այլև սրանք առաջին հերթին կենսաբանական սննդային ընդհանուր շղթայում այն անհրաժեշտ օղակն են, որոնց ոչնչացումը ցանկացած գնեցում կհանգեցնի անկանխատեսելի հետևանքների: Մասնագետների, առաջին հերթին բնապահպան-էկոլոգների, խնդիրն է մշակել այնպիսի նդանակներ, որոնք թույլ կտան որոշակի վայրերում կարգավորելու տնտեսի թվաքանակը՝ վտանգ չստեղծելով նրանց համար որպես տնտես ֆաունայից անհետացման: Այդ ուղղությամբ ներկայիս ընդունված նդանակը պայքարի կենսաբանական մեթոդի կիրառումն է, երբ մեկ կենդանատնտեսակ ակտիվ գործունեությամբ մասնակցում է մեկ այլ տնտեսի թվաքանակի կարգավորմանը:

Резюме

Биология грызунов, распространенных в НКР

До сегодняшнего дня в Нагорном Карабахе выявлено 8 семейств, 30-33 видов грызунов, но по всей вероятности, эти данные не окончательные. В ходе наших исследований наблюдался прирост грызунов в низменностях Гадрутского и Мартунинского районов. В итоге по нашим подсчетам, выяснилось, что действующие норки грызунов составляют в среднем на один гектар 11370-11780, которые наносят колоссальный ущерб сельскохозяйственным угодьям.

Прирост грызунов связан с благоприятными экологическими условиями и уменьшением количества хищных птиц и животных, которые питаются ими.

Несмотря на то, что грызуны - вредители сельского хозяйства, в то же время они являются цепенью питания ценозов. Задачи экологов-момологов заключаются в доработке таких методов борьбы, при которой этот вид не находился бы под угрозой полного исчезновения, что следует регулировать.

Ամփոփում

Մինչ այսօր Առնային Ղարաբաղում հայտնաբերված է 8 ընտանիք, 30-33 տնտեսի կրծողներ, սակայն, ամենայն հավանականությամբ, այս տվյալները վերջնական չեն: Մեր ուսումնասիրությունների ընթացքում Հադրութի և Մարտակերտի շրջաններում դիտվել էր կրծողների քանակի աճ: Արդյունքում մեր հաշվարկներով պարզվել է, որ կրծողների գործող բները կազմում են միջին հաշվով մեկ հեկտարի վրա 11370-11780, որոնք վիթխարի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը:

Կրծողների աճը կապված է բարենպաստ էկոլոգիական պայմանների և գիշատիչ թռչունների և կենդանիների քանակի նվազման հետ:

Չնայած կրծողները գյուղատնտեսության վնասատուներ են միևնույն ժամանակ նրանք հանդիսանում են սննդային շղթայի օղակներ գնեցումների խնդիրը պայքարի այնպիսի մեթոդների մշակումն է, որոնց դեպքում այդ տնտեսը չի հայտնվի լրիվ անհետացման վտանգի տակ:

Գրականություն

1. Յավրույան Է. Գ., Հայրապետյան Վ. Ս., Ղարաբաղի վայրի կաթնասունները // (Միջատաբանություն, ձեռնարկներ, կրծողներ, նապաստակակերպեր), Ստեփ. 2003, էջ 48-66:
2. Павлюнов И. Я., Россолимо О. Л. Систематика млекопитающих СССР/ Моск. Изд., МГУ, 1987, стр. 3-281.
3. Павлюнов И. Я., Россолимо О. Л. - Разнообразие млекопитающих // По материалам экспоз. зоол. музея МГУ, изд. Московского университета, 1997.